ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Գոհար Սաթունց, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության փորձագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի սեպտեմբերի 11-ից 22-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է այն հայեցակարգերը և գործիքները, որոնց միջոցով հնարավոր կլինի վերլուծության ենթարկել հարկաբյուջետային քաղաքականությունն ու բացահայտել, թե ինչպես այն կարող է ապահովել մակրոտնտեսական կայունություն և կայուն երկարաժամկետ աճ: Քննարկվել է պետության ծախսային և եկամտային քաղաքականությունները, դրանց բարեփոխումների հնարավոր ուղղությունները, որոնք կհանգեցնեն ներառական աճի ապահովմանը, ներկայացվել է ֆիսկալ կանխատեսումների գործընթացը, հիմքում դրվող ենթադրությունները և իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմը, ինչպես նաև հարկաբյուջետային կայունության և պարտքի կայունության հայեցակարգերը: Ներկայացված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ քննարկված գործիքակազմի գործնական կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության հիմնական հայեցակարգերը և գործիքակազմը՝ ներկայացնելով հարկաբյուջետային քաղաքականության միջոցով երկարաժամկետ կայուն աճի հասնելու տեսական և գործնական հիմքերը, որոնք հիմք կհանդիսանան միջազգային հարկաբյուջետային զարգացումների վերլուծությունները, արտաքին պարտքի կայունության վերլուծությունները, գնահատումներն ու կանխատեսումները հարկաբյուջետային քաղաքականության մշակման գործընթացում պատշաճ կիրառման արդյունավետությունը ապահովելու տեսանկյունից:

5. Քննարկված թեմաները՝

1. Ներկա մակրոտնտեսական հիմնական միտումներ և հարկաբյուջետային մարտահրավերներ

2. Պետական ֆինանսները և տնտեսությունը: Հարկաբյուջետային քաղաքականություն, երակարաժմկետ աճ և մակրոտնտեսական կայունություն,
3. Բյուջետային հաշիվներ և բյուջետային ագրեգատների ցուցանիշներ,
4. Հարկաբյուջետային դիրքի գնահատում,
5. Հարկաբյուջետային քաղաքականություն և ներառական աճ,
6. Ներքին ռեսուրսների մոբիլիզացում: Հարկային քաղաքականության բարեփոխումներ և հարկային վարչարարություն,
7. Ծախսային քաղաքականություն: Ծախսերի ռացիոնալացում, ներդրումային ծախսեր,
8. Հարկաբյուջետային կանխատեսումներ,
9. Հարկաբյուջետային բազմարկիչներ: Տեսություն, գնահատում և կիրառում,
10. Հարկաբյուջետային կայունություն, պարտքի կայունություն և հարկաբյուջետային տարածք:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն՝ ներկայացնելով առկա տնտեսական նախադրյալները, հարկաբյուջետային քաղաքաակնության դիրքը կարճաժամկետ հատվածում, դրամավարկային քաղաքաակնության հետ դրա կոորդինացման արդյունավետությունը, պարտքի կայությունը և ներառական աճի ապահովման հնարավորությունները՝ ամփոփելով շնորհանդեսը քաղաքականության բարելավմանը վերաբերող առաջարկներով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

27 սեպտեմբեր, 2023թ.